

մարմնոյ մը կենդանի ուժը՝ ջերմութեան կը փոխուի բախմամբ, և այս յերմութեանը կ'ըստուի Հագարտցրա-ստմեայր: Էյս եթէ ինկած մարմնոյն կէս զանգուածը բազմապատկենք երազութեան քառակուսիով, այն է $(600000) \times \frac{1}{2}$ կ'ունենանք 180000000000, և եթէ այս թիւս 425 ուր բաժնենք, կ'ելլէ գրեթէ 44 միլիոն ջերմ-քանակ, որ կը ծնանի 1 Հզգ. մարմնոյ մը Արեւս վրայ անկումէն:

Այս հաշուով երկվայրկեան մէջ Արեւուն մակերեսի վրայ ենթադրեալ իննոց մարմիններու ծանրութիւնները եթէ հաւաքենք երեք ժամ 17 վայրկեան և երեսուն մանրերկրորդ, կ'ունենանք կշիռ մը ամբողջ 1 տանին, որ է Հզգ. 78 շարունակուած 21 գրոյով: Արդ եթէ ամէն երեք ժամ և 17 $\frac{1}{2}$ վայրկեան անգամ մը լուսին մը ինչայ Արեւս վրայ, պիտի լեցնէ Արեւուն սպառած ջերմութեան տեղը: Բայց տեղեկեալ մէջ կան շատ զաղտնիքներ, որ մեզի հասկնալի չեն և մեզի անծանօթ են. ասոնց կար-զէն է Զան աստղաց, ոչ մոլորակաց շարունակ վառ մնալուն պատճառները. և ինչ որ բացատրեցինք այժմ հասն ծանօթութիւններով է միայն.

Հ. ԽՈՐԷՆ ՍԻՆԱՆ

Shake off this downy sleep, death's counter-
feit, And look on death itself!

(Macbeth-Shakespeare)

□ □

Այո՛, պէտք է զարթնուլ խորունկ այս քունէն,
Եւ թըմրութեան վանել խաւարն, ոսկեղէն
Իտէլալի մը բաժակէն արբենալ,
Ատտուածներէն իսկ աւելի մեծ ըլլալ...
Ու տանջուիլ, աղբիւրն է՝ վիշաճ լոյսի.
Երազներուն խաչը կըրել մէկուսի
Մինչ արինոտ ու ծիրանի գողգոթան,
Հըպարտ ըլլալ և անտրտունջ յաւիտեան...
Ճառագայթով լեցուն ընիւ իր հոգին,
Յաղթմանակէ գեղեցկութիւնը կենանքին
Լոկ մահուան մէջ, ու փընտընէ հոն միայն
Երազներու գինովութիւնն անսահման:
Ու հաւատալ որ Մըտածումը կ'ապրի
Արշալոյսի մ'իբրև ծագումն հըրալի,
Բայց ան չարժեք մահուան հանգիստը խորին,
Հոն արփագեղ հորիզոններ կը բացուին՝
Զոր ոչ մէկ բան կը վըրդովէ, ոչ մէկ ձայն,
— Ո՛վ Մահ, լոյսի բոսորագեղ ծիածան...

ԱՐՑԻՆ-ԵՐԿԱՅ

« Երազներ ու ճառագայթներ »

ԱՆՅՆՈՂ ՏԱՐԻՒՆ

✽ ✽

Գարուն մըն ալ զոգն իր ողբով լի կ'անցնի
Ու արահետ մը կոյս-կենանքիս զընկով,
Արշալոյս մ'որ երեք կաթիլ մ'արիւնի
Զի դրաւ կապոյտ երկընքիս վրայ չողելով:

Լայն քղանցքիդ կառչած գիտ ո՛ր կը տանիս
Մոայլ միջոցի կըլափին մէջ վըհասոյդ,
Ո՛ւր կը տանիս, երբ ըսկիհին մէջ սըրտիս
Կարիճ մը մեծ կը սողոսկի լիհանոյդ:

Գըրջիս վըրայ նըլոյլ մը գիւ չըտեսաւ
Ամբոխն՝ որ վարն իմ երգերուս կը սպասէ.
Քնարիս վըրայ նըլազ մը դեռ չըղբաւ,
Եւ ողնացոյց քամակդ հոգիւն է կ'ուզէ:

Կոյր թըռչանքիդ համբոյրն հեռու իմ գըլխէս
Մըտածումիս կըրող գինին հանգուցիչ,
Վաղը ինծի պիտի ըսեն « Ալեզէս », 
Ա՛լ չունի սաղմը երգերու ծընունցի »:

Կ'անցնի քամիդ թափով մ'անհուն և ումպէտ,
Հէք մարդկութեան վըրայն թանձր ալիքի.
Ու կ'ազազէ կայծն հոգիին բոցակերտ,
Միբոյ ծարաւն, որ չուրթին վրայ կ'ընծիւղի:

Ամբոխն երէկ լոյս-ափունքին Ովկիանոս՝
Փեղ զըրկաբաց ու ծընրադիր ողջունեց.
Այսօր վազքիդ հուր՝ սարն ի վեր մահացու
Ոչընչութիւնը բազկին մէջ ծըրարեց:

Մեր պառաւներն ըսին, կորսուէ՛ դու բու մ'ես,
Դուն միւր երկրին անիծեալն ես կորսուէ՛,
Մեր ծինագէս լեռն ապաւէն չունի քեզ,
Դուն մեր Յեղին Պիղատոսն ես կորսուէ՛:

Համբոյրներով բեռնաւորուած քանինքր
Ըտտուերիդ տակ երազներով հեշտացան,
Բայց թափառկոտ գնացքիդ, օրհնա սարսուռներ,
Հիւրանդ իրենց ուսէն թօթուել չըկըրցան:

Ու ալ կանցնիս, հայոյանքի, օրհներգի
Կապոցներու և դէգերու վըրայէն...

Կը սողոսկի լոկ իբր յորձանք մ'ալիքի՝
Ոչինչն՝ հըսկայ մայր, դազալիք ետեւէն:

Սև սարսափի աղօտ լոյսին մէջ հեռուն
Ափ մ'ըտաշխէ ծաղիկ սէրովը օծած
Գեղազանգուր Հայուհին՝ Ամանորին կը նետէ:

Հ. Ա. ՏԵՐԼԵՆ